«Կարևոր է, որ մեր շրջանավարտները կարողանան Հայաստանում աշխատանք գտնել»



06.12.2016 | 00:32

ԱՄԷ-ի հայ համայնքի ներկայացուցիչներին, ինչպես բոլոր ծնողներին, հետաքրքրում է, թե որտեղ պետք է իրենց զավակները կրթություն ստանան: Այստեղ բազմաթիվ բուհեր կան, այդ թվում՝ միջազգային ճանաչում ունեցող համալսարանների մասնաճյուղեր, զգալի թիվ են կազմում ամերիկյան համալսարանները, սակայն հայ ծնողներին այլընտրանք է առաջարկում մեր այսօրվա զրուցակիցը՝ Հայաստանի ամերիկյան համալսարանի տնօրեն Արմեն Տեր-Կյուրեղյանը, որ հյուրընկալվել էր Աբու Դաբիում: Երեկոյին ներկա էր նաև ԱՄԷ-ում ՀՀ դեսպան Գեղամ Ղարիբջանյանը, որը, պարոն Տեր- Կյուրեղյանի խոսքով, համալսարանի գործունեության առաջին տարիներին մեծ աջակցություն է ցույց տվել: Արմեն Տեր-Կյուրեղյանը ներկայացնում էր քսանհինգամյա համալսարանը՝ հիմնադրման պատմությամբ, ձեռքբերումներով, առավելություններով, ընձեռած հնարավորություններով, համագործակցության ծրագրերով, աշխատաշուկայում շրջանավարտների պահանջարկով: Ի միջի այլոց, ԱՄԷ-ի հայ համայնքը հարում է այն կարծիքին, որ պետք է ժամանակակից, մեծ պահանջարկ և լավ վարձատրվող մասնագիտություն ստանալ: Այս առնչությամբ մեզ հետաքրքրող մի քանի հարցերի շուրջ զրուցել ենք ՀԱՀ-ի տնօրեն ԱՐՄԵՆ ՏԵՐ-ԿՅՈՒՐԵՂՅԱՆԻ հետ, իսկ մնացած հարցերի պատասխանները կարող եք գտնել համալսարանի պաշտոնական կայքում:

-Մինչ Աբու Դաբիում Հայաստանի ամերիկյան համալսարանի գործունեությունը ներկայացնելը, ո՞ր հայկական համայնքներում եք եղել, պարոն Տեր-Կյուրեղյան:

-Եղել ենք Ռուսաստանի քաղաքներում՝ Մոսկվայում, Ռոստովում, ինչպես նաև Բեյրութում, երկու անգամ՝ Թուրքիայում, Թբիլիսիում, ԱՄՆ-ի արևելյան և արևմտյան

ափերի քաղաքներում: ԱՄԷ-ում առաջին անգամ ենք, իսկ այստեղից պետք է այցելենք Քուվեյթ:

-Տարածված կարծիք կա, որ ԱՄԷ-ի հայ համայնքը նյութապես ապահովված է և կարող է իրեն թույլ տալ, որ զավակները կրթություն ստանան աշխարհի ցանկացած համալսարանում՝ ցանկացած վարձավճարով: Որքա՞ն է ՀԱՀ-ի վարձավճարը գայթակղիչ և մատչելի:

-ՀԱՀ-ի ուսման վարձը հայաստանցիների համար տարեկան մոտավորապես երեքից չորս հազար դոլար է՝ նայած մասնագիտության: Իսկ օտարերկրյա քաղաքացիների համար վարձը յոթ-ութ հազար դոլար է, բայց եթե հայեր են և ունեն երկքաղաքացիություն, նրանց ընդունում ենք որպես ՀՀ քաղաքացիների, ապա ուսման վարձը նրանց համար երեքից չորս հազար դոլար է: Մենք ամերիկյան համալսարան ենք, ունենք հավատարմագրում Western Association of Schools and Colleges-ի (ԱՄՆ-ի հանրային և մասնավոր համալսարաններին հավատարմագրում տվող վեց գլխավոր մարմիններից մեկը) կողմից: Մենք ունենք նույն հավատարմագիրը, ինչ Կալիֆոռնիայի, Բրքլիի, Լոս Անջելեսի կալիֆոռնյան համալսարանները (UCLA): Մեր դիպլոմը միջազգային ճանաչում և արժեք ունի, հավատարմագրված ենք նաև ՀՀ ԿԳՆ-ի կողմից:

-Ճի՞շտ է այն կարծիքը, որ ՀԱՀ-ը Կալիֆոռնիայի համալսարանի մասնաճյուղն է Հայաստանում:

-Մենք սերտորեն համագործակցում ենք Կալիֆոռնիայի համալսարանի հետ, որը մեր հիմնադիրներից մեկն է (ՀԲԸՄ, Հայաստանի կառավարություն և Կալիֆոռնիայի համալսարան): ԱՄՆ-ում կա ոչ շահառու կազմակերպություն, որի քսաներկու հոգաբարձուներից ինը Կալիֆոռնիայի համալսարանի բարձրաստիճան անձինք են՝ ներառյալ հոգաբարձության ատենապետը: Մենք իրավաբանական, վարչական խորհրդատվություն ենք ստանում Կալիֆոռնիայի համալսարանի կողմից, բայց նրա մասնաճյուղը չենք համարվում: Մենք անկախ համալսարան ենք:

-Համալսարանների համար կարևոր է աշխատաշուկայի հետ կապը, քանի որ այսօրվա աշխատաշուկայում կարևոր է նաև պահանջարկ ունեցող մասնագետների պատրաստումը: Դուք ինչպե՞ս եք աշխատում այդ ուղղությամբ:

-Լրջորեն ուսումնասիրում ենք, թե Հայաստանում տվյալ մասնագիտությամբ աշխատանք գտնելու ինչպիսի հնարավորություններ կան: Կարևոր է, որ մեր շրջանավարտները կարողանան Հայաստանում աշխատանք գտնել: Հիմա, օրինակ, E&V Consulting ընկերությունը մեր պատվերով ուսումնասիրում է հաջորդ տարվանից համալսարանում ներդրվելիք երկու մասնագիտությունների պահանջարկն աշխատաշուկայում: Այդ ընթացքում նաև զրուցում ենք գործատուների, կառավարության, տարբեր ընկերությունների անդամների հետ: Համալսարանում կա նաև հատուկ գրասենյակ՝ Alumni and Career Development Office, որն աշխատում է դրսի ընկերությունների հետ, մեր ուսանողներին ծանոթացնում նրանց պայմաններին: Նշեմ, որ ՀԱՀ-ի շրջանավարտների 75 %-ն ավարտելուց հետո մեկ ամսում աշխատանք է գտնում:

-Քանի՞ ուսանող ունեք հիմա, և ո՞ր մասնագիտություններն են ամենապահանջվածը:

-ՈՒնենք ավելի քան 1800 ուսանող: Ամենաշատ դիմորդները բիզնեսի ֆակուլտետում են, երկրորդը համակարգչային, անգլերենի և հաղորդակցության ֆակուլտետներն են:
-Մեր զրույցն ավարտելուց առաջ ի՞նչ խորհուրդ կտայիք ԱՄԷ հայ համայնքին:
-ՀԱՀ-ը Հայաստանի լավագույն համալսարաններից է, աստիճանաբար նաև տարածաշրջանում ենք ճանաչում ձեռք բերում: Թող մեր կայքի միջոցով ծանոթանան համալսարանին, Հայաստան այցելելիս մեզ մոտ գան: Հատուկ տուր ունենք, որ ուսանողները կարող են կազմակերպել և ցույց տալ: Եթե տեսնեն, շատ բավարարված կզգան:
Զրուցեց **Համասփյուռ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ**
ԱՄԷ-ում մեր հատուկ թղթակից